Կայսերական կամաց գործեալ են ինչ, այժմ անարժան գործն Յունաց նախատինս բերէ 'ի վերայ նոցա։ Զի 'ի հրովարտակս Հայոց բացայայտ գրեալ է բաժանորդութիւն գերեզմանի Ս. Աստուածածնի և 'ի Բեթղեհէմի, ուստի հարկ է հաւասարաբաժին լինիլ երկոցունց. յերից դրանց եկեղեցւոյն, երկուքն սեփհական են Յունաց, և հիւսիսայինն Հայոց. սակայն 'ի ժողովի քննութեան յայտ արարին Յոյնք թէ իրաւամբ բաժանորդութեան փակել զայն. զի եթէ հարկ լինի փակել, ուստի՞ մտցեն Հայք յԱյրն Ծնընդեան, զի խափանի ճանապարհն՝ զրկին 'ի պաշտամանց ինքեանք և ուխտաւորք նոցա. և միջնադուռն փայտեայ, 'ի վաղ ժամանակաց շինեալ է 'ի Հայոց. արտաքին երկաթեայ դուռն, որոյ փականքն են 'ի ձեռս Յունաց, և բաց յայնմանէ Հայք չունին այլ ճանապարհ 'ի վանս իւրեանց, և 'ի փակելն զայն՝ Հայք մնան արտաքոյ դրան։ Եւ յայսմ նըւագի խնդիրն վերանորոգութեան 'ի հակառակութենէ յառաջ եկեալ է։ Զպատկերս և զկանթեղս յԱյրն Ծնընդեան և 'ի կողմն հիւսիսոյ, եդեալ են Հայք յառաջագոյն ըստ օրինակի գերեզմանի Ս. Աստուածածնի, այժմ Յոյնք իբրև նորահնար զիրս վարկանելով զնոսա կամին բառնալ։

Արդ՝ Փոխանորդն, Թարգմանն եւ Ծերակոյտն Հայոց խնդրեն չձգել Յունաց զձեռս իւրեանց 'ի պատկերս, 'ի կանթեղս և յայլ սպասս եկեղեցւոյ, լեալ իրաւամբ բաժանորդութեան. յԱյրին Ծննդեան և յեկեղեցին և 'ի սիւնազարդ սրահն կախել կանթեղս և պատկերս, զարդարել, աւել ածել և մաքրել, արտաքին դրան լինել բաժանորդ, հիւսիսայինն սեփհականել, և յեկեղեցին կանգնել սեղան։ Եւ ըստ պահանջման արդարութեան՝ վերանորոգութիւն Տաճարին Ս. Յարութեան և Եկեղեցւոյն Բեթղեհէմի լինել ընկերութեամբ. զսեփհական տեղիս՝ անկախութեամբ, և զբաժանորդս ընկերութեամբ, եւ շինել զչորեսին սենեակս Ս. Յարութեան զոր գրեցաք, ١٥٢٧ Րէպիւլ էվվէլ վերջ։

Սակայն այսպիսի գրեանք Դատաւորաց, խնդիրք եւ ջանք Հայոց՝ ոչ ինչ օգնեցին գործոյն, զի չէր հնար Արքայի յետս կոչել զհրովարտակն ընդհանուր նորոգութեան Ս. Տեղեաց՝ զոր տուեալ էր Յունաց։ Յետ այսր ամենայ-